

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ, ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ
ԵՎ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱՅԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ԲԱՂԱՊՐԻՉՆԵՐԻ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ⁴⁵

Արմենուիկ Աբայան

Բանալի բառեր՝ մշակույթ, մանկավարժական մշակույթ, մանկավարժական գործունեության մշակույթ, հաղորդակցում, վարկանիշ, ռեֆլեքսիա, ապրումակցում, տեխնիկա:

Մանկավարժական վարպետության կարուցվածքային ամենակարևոր բաղադրիչը մանկավարժական տեխնիկան է:

Տեսական վերլուծությունը թույլ տվեց մեզ ուսուցիչ մանկավարժական տեխնիկան սահմանենք որպես անձնային և մասնագիտական որակների, հոգեբանական և հաղորդակցման միջոցների համակարգ, որին նպատակառուղղված դիմում է ուսուցիչը՝ մանկավարժական վարպետությանը տիրապետելու համար:

Քննարկենք մանկավարժական տեխնիկայի կարևոր կարուցվածքային բաղադրիչները.

Մանկավարժական գործունեության մշակույթը

Ապագա ուսուցիչ մանկավարժական տեխնիկայի՝ որպես մանկավարժական վարպետության բաղադրիչի դիտարկումը հանգեցնում է «մշակույթ», «մանկավարժական մշակույթ», «մանկավարժական գործունեության մշակույթ», հասկացությունների սահմանման անհրաժեշտությանը:

«Մանկավարժական բառարան» աշխատության հեղինակները նշում են. ««Մշակույթը» առաջացել է լատիներեն կովսուրաբուծում, մշակում բարից և ներկայացնում է մարդկային հասարակության նյութական, հոգայի արժեքների ամբողջությունը, որոնք ստեղծվել են ու ստեղծվում են մարդկության կողմից հասարակական-պատմական գործընթացում, և բնութագրում է հասարակության ծեռք բերած աստիճանը...»

Մանկավարժությունը հանդես է գալիս որպես համամարդկային մշակույթի և գիտության բաղկացուցիչ մասը և օգտագործում է այդ արժեքները իր նպատակային խնդիրների հրականացման համար» [1]:

Անձի մշակույթի ձևավորումը անհատի երկարատև ինքնազարգացումն է, որի ընթացքում մարդը իր կենսարանական բնության հետ ներդաշնակության հնարավորություն է ստանում: Այստեղից էլ անհրաժեշտություն է առաջանում լուսաբանելու մշակույթի՝ որպես մանկավարժական տեխնիկայի զարգացման ամբողջական բաղադրիչի ներկայացման և հաստատման երևոյթի բացահայտումը:

Տեսական վերլուծությունը թույլ տվեց մեզ հանգելու այն եզրակացության, որ մշակույթը համարվում է անձի գնահատական «չափ»՝ արտացղելով հասարակական գործունեության մեջ նրա էլության, այլ մարդկանց հետ ունեցած հարաբերությունների

+Հոդվածն ընդունվել է 16.02.18:

Հոդվածը տպագրության է երաշխավորել ԱրՊՀ մանկավարժության և հոգեբանության ամբիոնը

ՄԵԽՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2018

յուրահատկությունը:

Որպես ուսուցչի մանկավարժական տեխնիկայի կարևորագույն բաղադրիչ՝ մենք հանգամանորեն դիտարկում ենք «մանկավարժական մշակույթ» հասկացության էությունը:

Դ.Ֆ. Սամոյլենկովը նշում է. ««Ընդհանուր» և «Մանկավարժական կուլտուրա» հասկացությունները տարրերվում են իրարից: Մարդու վարքի ընդհանուր կուլտուրան վարքի կանոնների պահպանումն է հասարակական վայրերում, անձնական կյանքում, ուրիշ մարդկանց հետ նրա փոխհարաբերություններում /տակտ, քաղաքավարություն, համեստություն, պարզություն, հարգանք, ծշմարտացիություն և այլն/: Ուսուցչի վարքի մանկավարժական կուլտուրան նախատեսում է աշակերտների հետ նրա փոխհարաբերություններում ընդհանուր»

մանկավարժական պահանջների պահպանում ... Մանկավարժական կուլտուրան ուսուցչի մանկավարժական տակտի մի մասն է կազմում»[2]:

Ընդհանուր առմամբ համաձայն ենք Ն. Հակոբյանի, Ա. Գևորգյանի, Ա. Հովհաննիսյանի և Ա. Դավթյանի հետ, ըստ որոնց մանկավարժական նաև ազիտական մշակույթը ներադրում է բազմապիսի դրական հատկանիշների առկայություն, որոնց շարքում առաջնային են այնպիսի բարոյական հատկանիշներ, ինչպիսիք են սերը երեխաների նկատմամբ, նրանց հետ համագործակցելու կարողությունը, հաղորդակցման ժամանակ վերապրվող ուրախությունը, երեխաների հետաքրքրությունների հավատարիմ պաշտպանությունը, արդարամտությունն ու պարկեշտությունը [3]:

Ըստ մեզ՝ «Մանկավարժական մշակույթ» հասկացությունը ըստ էության, իրենից ներկայացնում է անծի և նրա գործունեության ներքին և արտաքին մշակույթը: Այսինքն՝ մանկավարժական մշակույթը միասնականացված գործընթացների դրական արդյունք է:

«Մանկավարժական մշակույթ» և «մանկավարժական գործունեության մշակույթ» հասկացությունները երբեմն նույնացվում են, որը բացատրվում է նրանց կառուցվածքյին որոշ տարրերի նմանությամբ:

«Գործունեությունը մարդու ակտիվության գործընթացն է: Գործունեության ընթացքում իրականացվում է մարդկանց դիրքորոշումը միջավայրի, միջանց, առանձին խմբերի, առարկաների նկատմամբ: Գործունեության դրականատմարը առաջարդում է կյանքը: Մանկավարժությունը գործունեությունը տեսնում է սովորողների աշխատանքի, ուսման, խաղի և այլ բնագավառներում: Գործունեությունը կարող է լինել առաջատար, խմբային, գործնական, տեսական բնույթի»[4]:

«Մանկավարժական գործունեության մշակույթ» հասկացությունը համեմատաբար նոր է մանկավարժական գրականության մեջ:

Հետևելով ժամանակակից մանկավարժ գիտնականների դիրքորոշումներին՝ մենք նույնականացնում ենք, որ մանկավարժական գործունեությունը ստեղծագործական գործունեություն է: Ուսուցիչն իր մասնագիտական գործունեության ընթացքում ամենատարբեր խնդիրներ ու գործառույթներ է իրականացնում..., ուսուցչի մասնագիտական կուլտուրան ծնավորվում է մասնագիտական գործունեության և ինքնագիտակցման, նոր մտավոր, ստեղծագործական և պրակտիկ փորձի ձեռքբերման հիման վրա: Այդ ընթացքում տեղի է ունենում ինքնիրագործում, ինքնակատարելագործում, նպատակների և դրանց հասնելու ռազմավարության ընտրություն [5]:

Մանկավարժական հաղորդակցման մշակույթը

Արօրյա կյանքում, տանը, դպրոցում, փողոցում, աշխատավայրում և առհասարակ ամեն տեղ մենք անընդհատ գտնում ենք հաղորդակցման մեջ, որտեղ շփում ենք

ՄԵԽՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱԼԱՐՄԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2018

ծանոթ և անծանոթ մարդկանց հետ:

Հաղորդակցումը մարդու կենսագործունեության պայման է, նրա առաջնային և հիմնարար պահանջմունքներից մեկը: «Հաղորդակցումը մարդկանց փոխչփան և կապի մի գործընթաց է, որի ընթացքում նրանք փոխանակում են տեղեկություններ, փոխգործում ու փոխադրում միմյանց վրա, ընկալում ու գնահատում միմյանց, հաստատում տարբեր կարգի ու աստիճանի հարաբերություններ» [6]:

Հաղորդակցումը կատարվում է այն պահին, երբ մարդիկ փոխհարաբեր են, և մի անձը ազդում է մյուսի վարքի վրա նույնիսկ այն ժամանակ, երբ ոչ մեկը չի խոսում: Թեև հաղորդակցությունը առաջին հերթին վերաբերում է մտքերի, գաղափարների, զգացմունքների և տեղեկատվության փոխանցման և փոխանակման գործողությանը բանավոր խոսքով, բայց համարավոր է շփվել նաև լուսթյամբ, մարմնի լեզվով, դեմքի շարժումներով և արտահայտություններով, երաժշտությամբ և այլ մարդկային արտահայտման ստեղծագործական ձևերով:

Ա.Ա.Լեռնուկի կողմից մանկավարժական հաղորդակցումը դիտարկվում է որպես ուսումնական գործընթացում և նրանից դուրս մասնագիտական հաղորդակցում սուբյեկտի և օբյեկտի միջև՝ ուղղված բարենպաստ հոգեբանական կյանքի ստեղծմանը: Նա տվել է մանկավարժական հաղորդակցման հետևյալ սահմանումը. «Օպտիմալ մանկավարժական հաղորդակցումը ուսուցման գործընթացում ուսուցչի այնպիսի հաղորդակցումն է դպրոցականների հետ, որը լավագույն պայմաններ է ստեղծում սովորողների մոտիվացիայի զարգացման և ստեղծագործական գործունեության, նրանց անձի ծևավորման համար.....թույլ է տալիս ուսուցման գործընթացում մաքսիմալ կերպով օգտագործել ուսուցչի անձնային որակները» [7]:

Մեր կարծիքով՝ սովորողների համար մանկավարժական հաղորդակցումը աշխարհընկալման, նրա ես-հայեցակարգի կայացման միջոց է: Այն առաջին հերթին սովորողների ուսումնական, գիտական, տեղեկատվական հաղորդակցման, լեզվական ընդունակությունների զարգացման միջոց է, որն իրականացվում է ուսումնական գործընթացի ժամանակ, հատկապես՝ դասին: «Ժամանակակից դասը պետք է բնութագրվի ուսուցչի և աշակերտների հաղորդակցման բարձր կուլտուրայով՝ խիստ պահպանելով մանկավարժական էթիկայի նորմերը:....Դասի ընթացքը դիտարկելիս հարկավոր է ուշադրություն դարձնել աշակերտներին հարցելու բնույթի, աշակերտների թույլ տված սիմվոլների նկատմամբ արձագանքների, գնահատող բնույթի ռեալիզմների վրա, առանձին դպրոցականների հետ հաղորդակցման ոճի վրա, աշակերտներին դիտողության անելու սովոր վա» [8]:

Մանկավարժական տեխնիկայի հաղորդակցական կողմում անհրաժեշտ բնութագրելու է գեղեցիկ խոսքը՝ խոսքով ներշնչելու և համոգելու կարողությունը: Խոսքային նյութը, որն օգտագործվում է ուսուցչի կողմից, պետք է հարմարված լինի լսողի պատրաստության մակարդակին և դառնա խոսքի նշակույթի օրինակ: Ծիկվելով՝ ուսուցչը չպետք է մոռանա սովոր մասին, որով խոսում է այլ մարդկանց հետ: Ուսուցչի խոսքի հուզականությունը միշտ պետք է ունենա դրական ուղղվածություն, քանի որ լսողներին բացասական հովզերով վարակելու ավելի հեշտ է, քան դրական: Իր մտքերը դրագեն և պատկերավոր արտահայտվելու ուսուցչի անկարողությունը անդրադարձնում է դպրոցականի աշխատունակության վրա, իշեցնում կենսունակության մակարդակը և ուսման արդյունավետությունը:

Մեր ժամանակի անվանի մանկավարժներ Մ.Մ Մանուկյանը և Ա.Ա. Մանուկյանը «Մանկավարժական տեխնիկա և տեխնոլոգիա» աշխատության մեջ ընդգույն են մանկավարժական խոսքի հետևյալ տեսակները.

ՄԵԽՐՈԴ ՄԱՆՏՈՅՑ ՀԱՍՏԱՏՄԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2018

գ պարզ ու մատչելի խոսքը, որը բացում է Երեխայի միտքը, նրա արարքների նշանակությունը,

գ վստահ և հաստատ խոսքը, որը հավաքագրում է Երեխայի ուժեղը, նրան վառում հավատով,

գ բովանդակալից ու գրագետ խոսքը, որը ընդայնում է Երեխայի մտահորիզոնը, սովորեցնում է նրան բացահայտել նոր առարկաներ և երևոյթներ,

գ սուր և դիպուկ խոսքը, որը ակտիվացնում է Երեխայի միտքը և ստեղծագործական ուղին,

սրտագին և համոգիչ խոսքը, որը վստահություն է ներշնչում Երեխայի մեջ դեպի շրջապատն ու մարդիկ, նպատակային է դարձնում նրա յուրաքանչյուր քայլը, զգացմունքներն ու մտքերը [9]:

Մանկավարժը պետք է ունենա հստակ խոսքային և ոչ խոսքային հաղորդակցում, ինչպես նաև՝ դրանք կարդալու հմտություններ և կարողություններ: Դրանով իսկ նա կարող է ուժեղացնել հաղորդվող գիտելիքների, խրատի, խրախուսանքի ազդեցությունը, ավելի ազդեցիկ դարձնել մատուցվող նյութի բովանդակությունը: Մանկավարժը նաև պետք է հասկանա ժեստերի լեզուն, որպեսզի ժամանակին նկատի ուշադրության շեղումը, հոգնածությունը, թուլացնի հոգեկան լարվածությունը, համախմբի բոլորի ուշադրությունը և այլն:

Մարդիկ հավատացած են, որ դեմքը արտահայտում է գրուցակցի ներաշխարհը և բացահայտում դրա գաղտնիքները: Դեմքը հոգու հայելին է, մարդկային զգացմունքների արտահայտման իմանական միջոցը: Որոշ մարդիկ աչքերով ավելի շատ բան են ասում, քան կարող են ասել դրանց բառերը: Դեմքի մասերը՝ ճակատը, հոնքերը, աչքերը, բերանը, քիթը, կզակը, շղթումքները արտահայտում են մարդկային իմանական զգացմունքները՝ ուրախությունը, վիշտը, զարմանքը, վախը, կասկածը, զայրույթը և այլն:

Ուսուցչի գրավիչ, տեսանելի կերպարը ձևավորվում է հաղորդակցման ոչ խոսքային միջոցների համալիրից: Հաղորդակցման ոչ խոսքային միջոցների թվին են պատկանում միմիկան, տեսողական փոխգործակցությունը, տարածական և ժամանակային շփման կազմակերպումը, պանտոմիմիկան, ժեստերը: Մանկավարժի համար կարևոր է, որ սովորողներից յուրաքանչյուրն իմանա իր մարմական ազդանշանները, ժեստերը, դրական ազդանշաններ են, իսկ բացասական ազդանշաններ են տենդալից, չվերահսկող շարժումները, ինչպես օրինակ՝ ճակատի կամքիռները, սեղմած շուրթերը և այլն: Սակայն մարմնական ազդանշանները կարող են շատ հեշտությամբ սխալ հասկացվել [10]:

«Թեև խոսքային և ոչ խոսքային հաղորդակցման ձևերի միջև կան տարբերություններ, այնուհանդերձ, հաղորդակցման ընթացքում դրանք լրացնում են իրար: Այսպես, ոչ խոսքային հաղորդակցման ձևերը ուժեղացնում, ավելի արտահայտիչ են դարձնում խոսքային հաղորդակցումները, ինչպես նաև՝ ժխտում կամ հաստատում դրանք, կարգավորում գրուցը»[11]:

Հաղորդակցությունը ուսումնական գործընթացում պետք է լինի պարզ: Հետևաբար, մանկավարժը պետք է տիրապետի պարզ և հասկանալի լեզվով խոսելու ունակությամբ, ինչպես նաև տիրապետի մարմնական այսպես կոչված «ոչ խոսքային» ազդանշաններին: Ուսումնական հաջողությունը մեծ մասամբ կախում ունի հաղորդակցման լավ ունակությունից:

Մանկավարժական հաղորդակցումը պետք է լինի ոչ թե ծանր բեր, պարտականություն, այլ բնական, հաճելի փոխգործումներուն: Հետևելով Ա.Ա. Լեռնտեկին, մենք

ՄԵՄՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2018

նոյնապես կարծում ենք, որ դժվար է պատկերացնել մանկավարժական հաղորդակցում, որն իր մեջ չի կրում իմացական և դաստիարակչական ներուժ:

Այսախով՝ մանկավարժական գործընթացում ուսուցչի հաղորդակցման մշակույթը կարևորագույն իմացական և դաստիարակչական գործառույթ է կատարում, քանի որ ուսուցչի խոսքը, հաղորդակցման ձևերը ընդորինակվում են աշակերտների կողմից, որոնք դրսություն են միջանձնային հարաբերություններում:

Ուսուցչի անհատական վարկանիշը

Ուսուցչի մանկավարժական տեխնիկայի կարևորագույն բաղադրիչ է ուսուցչի անհատական վարկանիշը:

Վարկանիշի երևույթը ծևավորվել է անցյալ դարի 30-ական թվականներին, որը նշանակել է գործողություն՝ հանուն հասարակական բարօրության: 20-րդ դարի 60-ական թվականներին գիտության մեջ ծևավորվեց նոր ուղղություն՝ [Վարկանշաբանությունը], որի հիմնադիրը դարձավ ամերիկացի հայտնի տնտեսագետ Կ. Բոլդինզը:

Նախկին Խորհրդային Միությունում, այդ թվում նաև՝ Հայաստանում, գիտելիքների այդ բնագավառը սկսեց զարգանալ 20-րդ դարի 70-ական թվականներին և մեծ տարածում գտավ քաղաքական ու գործարար շրջանակներում:

Սոցիոլոգները վարկանիշը դիտարկում են որպես սուբյեկտի կողմից ստեղծված արտաքին կերպար, այլոց վրա որոշակի տպավորություն թողնելու, կարծիք, հարաբերություններ ստեղծելու համար, ինչպես նաև՝ օբյեկտին վերագրվող գովազդով, քարոզությամբ, նորածնությամբ, ավանդույթներով ներկայացվող հատկանիշների ամբողջություն՝ նրա նկատմամբ որոշակի ուշադրություն դարձնելու նպատակով:

Պ. Բերդը ծարկանիշը սահմանում է որպես «ընդհանուր տպավորություն, որը դուք թողնում ենք շրջապատղությունի վրա: Այն ծևավորվում է նրանից, թե ինչպես եք ներկայացնում մեր գաղափարները, ինչպես եք ծեզ դրսուրում հասարակության մեջ, ինչ եք խոսում, կամ ինչ եք անում» [12]:

Հոգեբանները վարկանիշը դիտարկում են որպես ինչ-որ մեկի կամ երևույթի նպատակային ծևավորված կերպար, որն առանձնանում է որոշակի արժեքային բնութագրերով և կոչված է հոգական-հոգեբանական ներգործություն ունենալու ինչ-որ մեկի վրա բնավորության գծերով, մտավոր առանձնահատկություններով, արտաքին տվյալներով, հագուստով և այլն:

Փիլիսոփաների կողմից առաջադրված մարդու ներքին և արտաքին բովանդակության միասնությունը հետազոտողները հիմք են համարում անհատական ծարկանիշի էռության համար՝ դարձնելու կողմնորոշիչ նրա ծևավորման գործընթացում:

Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և հոգեբանության մեջ ծարկանիշը դիտարկվում է որպես բարդ երևույթ, որն իր մեջ նիսավորում է բազմաթիվ տարրեր գործոններ [ժառանգականություն, դաստիարակություն, միջավայր, անձի սեփական ակտիվություն], դա կենսաժին, սոցիալական, հոգեբանական տարրերի ինտեգրված ամբողջություն է: Անհատական ծարկանիշի ծևավորումը «ընկած» է անձի ծևավորման և անհատականության դաշտում:

Սանկավարժության մեջ ուսուցչի ծարկանիշը դիտարկվում է որպես սաների, գործընկերների, սոցիալական միջավայրի և մասսայական գիտակցության մեջ նրա հոգական երանգավորում ստացած կերպարի ընկալում: Ընդ որում, ծարկանիշի ծևավորման ընթացքում իրական դրական միավորվում են այն դրական ներդրություններ, որոնք նկարագրվում են նրան շրջապատղությունում:

Ենք ենթադրում ենք, որ անհատական ծարկանիշը՝ որպես մանկավարժական տեխնիկայի բաղադրիչ, դրսուրվում է ուսուցչի անծում, և նրա մանկավարժական գոր-

ՄԵԽՐՈԴ ՄԱՆՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2018

ծունեության մշակույթին ամբողջական բնույթ է տալիս:

Մանկավարժական ռեֆլեքսիան և ապրումակցումը

Ռեֆլեքսիա հասկացությունը (լատիներեն *reflexio* – «վերադարձ հետեւ») սկզբնապես ծագել է փիլիսոփայության մեջ և նշանակել է ամեն ինչի վերաբերյալ մարդու մտորումների գործընթաց, որը ընթանում է նրա սեփական գիտակցության մեջ:

Ռեֆլեքսիան անձին հնարավորություն է տալիս տեսմելու իրեն կողքից՝ այլ ես-ի աչքերով, հասկանալու իրեն, իր ցանկությունները, ապրումները, արարքները, այսինքն՝ օգնելու ինքն իրեն սեփական անձը հասկանալու գործում [13]: Այն օգնում է մարդուն հասկանալու և ընդունելու այլ անձին, դա այլ անձին տեսմելու և նրա հոգեվիճակ ներթափանցելու ընդունակությունն է, միաժամանակ այն հնարավորություն է տալիս հասկանալու, թե ինչպես է գնահատվում և ընկալվում սեփական անձը այլ անձանց կողմից:

Մանկավարժի գործումնեության մեջ ռեֆլեքսիայի նշանակությունը իսկապես մեծ է և բազմազան:

Մանկավարժական տեխնիկայի ծևավորումը ուսուցչից պահանջում է դուրս գալ ռեֆլեքսիվ դիրքերի վրա, պատասխանել հետևյալ հարցերին՝ «Ես ի՞նչ եմ անում և ինչպես եմ ես անում»: Ռեֆլեքսիայի ընթացքում առկա է այն բանի գիտակցումը, թե ինչպես է նա ընկալվում գործընկերների կողմից:

Առանց զարգացած ներքին ռեֆլեքսիայի, իր բացասական ապրումների աղբյուրների գիտակցման՝ ուսուցչը չի կարող մտնել այլ մարդկանց աշխարհը (գործընկերների, աշակերտների, ծնողների), տեսնել նրանց հոգու խնդիրներն իր աչքերով:

Մանկավարժական տեխնիկայի կարևոր բաղադրիչ ենք համարում էմպաթիան:

Էմպաթիան (հունարեն՝ *Empathos*) նշանակում է ուժեղ, խոր տառապամքի աստիճանի հասնող զգացմունք, երկու անձնավորության միջև առաջ եկող հասուկ հարաբերություններ: Այս եզրը շրջանառության մեջ է դրել Զիգմոնդ Ֆրոյդը, որի օգնությամբ անվանի հոգեբանը նկարագրում է մարդու իրեն ուրիշի տեղը դնելու և ապրումակցելու հատկություն:

Ապրումակցման մասին Ա. Նավասարդյանը նշում է այսպես. «Ա անհատի ապրումակցումը Բ-ի հետ նշանակում է հետևյալը. Ա-ն հետևում է Բ-ի վարքին, ընկալում նրա ապրումների արտաքին դրսնորումներն ու, հիմնականում, ենթագիտակցորեն, այսինքն՝ առանց իրեն հաշիվ տալու, մեկնաբանում է այդ ագրանշանները և սկսում է ապրել այնպիսի հոյսքեր ու հոգեվիճակներ, ինչպիսիք ապրում է նրա սոցիալական ընկալման օբյեկտը: Նրանց միջև առաջ է գալիս հասուկ տիպի հոգական կապ, և Բ-ն Ա-ի համար դառնում է էմպաթիայի օբյեկտ: Իսկ ինքն այս կապի մեջ հանդես է գալիս որպես էմպաթիայի սուբյեկտ»[14]:

Վերլուծելով էմպաթիայի երևույթը՝ ի. Անդրեևան գտնում է, որ «էմպաթիայի ամբողջական գործընթացը բաղկացած է շղթայի երեք օղակներից, որոնք են՝ ապրումակցումը, կարեկցանքը և ներքին աշակցությունը: Յուրաքանչյուր օղակ խաղում է իր դերը: Ապրումակցումը, որի հիմքում ընկած է հետեւտիփիկացիան՝ նոյնացումը, դիմացին ապրումների արձագանքն է: Կարեկցանքը երևան գալը ենթարում է կոզմիսիվ՝ իմացական ուղղվածություն այն իրադրությունում, որն իր հերթին ակտիվացնում է տարրեր տիպի աջակցություններ, նաևն ներքին, հետո, որոշ պայմաններում, նաև արտաքին: Այլ խոսքով՝ էմպաթիան ենթարում է զարգացած ունակությունների առկայություն դեպի տարրեր էմոցիաներ և ինֆորմացիայի մշակում, որոնք պարունակվում են այդ էմոցիաների մեջ»[15]:

Իսկ ամերիկան հայտնի սոցիալական հոգեբան Ս. Աշը 1952 թվականին ներկա-

ՄԵՍՐՈՊ ՄԱՆՏՈՎ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԻՐԱՏՈՒ 2018

յացրեց նշված շղթայի կրծատված տարբերակը՝ առաջարկելով առանձնացնել էմպարիայի երկու տեսակ՝ ապրումակցում և կարեկցանք (ցավակցություն):

Էմպարիայի երկրորդ տեսակը՝ կարեկցանքը, ըստ Ս. Աշի, մի երևոյթ է, երբ սուբյեկտն ընկալում է օբյեկտին, հասկանում է նրա վիճակն ու ապրումները, բայց դրան գուգահեռ նա ունի իր՝ սեփական ապրումները, որոնք նրա համար առաջնային են:

Մանկավարժական ապրումակցումը իր մեջ ներառում է ոչ միայն ցանկացած երեխայի իրավիճակը, այլև նոյնականացնան մեխանիզմների պատասխան արտահայտությունը: Ուսուցչը չի կարող զգայ երեխայի տրամադրությունը և խոլ մնալ նրա խնդիրների նկատմամբ, չի կարող սովորողների հետ կապ ստեղծել, քանի որ երեխան ինտուիցիայով զգում է նրանց, որոնք անհանգստանում են նրա համար: Չապրումակցող ուսուցչը հաճախ դառնում է կրտսեր դպրոցականների՝ դպրոցին չհարմարվելու պատճառ՝ նոյնիսկ չցանկանալով դա:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Վարդանյան Բ.Թ. և ուրիշներ, Մանկավարժական բառարան, Եր., 2001, էջ 88
2. Սամովյենկով Դ.Ֆ., Ուսուցչի վարպետությունը, մանկավարժական տակտը և հեղինակությունը, Եր., 1963, էջ 153
3. Հակոբյան Ն.և ուրիշներ, Մանկավարժական հաղորդակցում, Եր., 2010, էջ 58:
4. Վարդանյան Բ.Թ. և ուրիշներ, նշվ. աշխ. էջ 29
5. Վարդումյան Ս.Տ., Վարելա Գ., ժամանակակից մանկավարժական մոտենական առաջնային գործություններ, Մասնագիտական կրթություն և մասնագիտական զարգացում, Եր., 2003, էջ 52
6. Հակոբյան Ն.և ուրիշներ, նշվ. աշխ. էջ 11
7. Լեոնтьев А.А. Педагогическое общение. М., 1979. стр.15
8. Բարանսկի Յոլ.Կ. Դասի կատարելագործման այլորթիմները, Եր., 1981, էջ 91:
9. Մանուկյան Ա.Ա., Մանուկյան Մ.Մ., Մանկավարժական տեխնիկա և տեխնոլոգիա, Եր., 2000, էջ 4
10. Միլիթոսյան Լ. և ուրիշներ, Մասնագիտական մանկավարժություն միջին և նախնական /արհեստագործական/ մասնագիտական ուսումնական հաստատություններում դասավանդողների համար, Եր., 2006, էջ 48
11. Հակոբյան Ն.և ուրիշներ, նշվ. աշխ. էջ 32
12. Берд П. Подай себя! Эффективная тактика улучшения вашего имиджа / Пер. с англ. Т.А. Сиваковой.-М.: Амалфея, 1997. стр. 65
13. Митина Е.В., Психологическая диагностика эмоциональной устойчивости учителя, учеб. пособия для практических психологов, М., 1992, стр.23
14. Նավասարդյան Ա., Էմպարիան հաղորդակցության կարևորագույն բաղադրիչ, 2010, էջ 171
15. Андреева И.Н., Азбука эмоционального интеллекта, Санкт-Петербург, 2012, стр.172

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Մանկավարժական տեխնիկայի կառուցվածքային բաղադրիչների
առանձնահատկությունները
Արմենուի Աբալյան

Հոդվածը նվիրված է մանկավարժական վարպետության կարևոր բաղադրիչին՝ մանկավարժական տեխնիկային: Հոդվածում լուսաբանվել են մանկավարժական տեխնիկայի կառուցվածքային բաղադրիչների առանձնահատկությունները՝ ընդգծելով մանկավարժական գործունեության մշակույթի, հաղորդակցման, իմիջի, մանկավարժական ռեֆլեքսիայի և ապրումակցման դերը ժամանակակից կրթական համակարգում:

РЕЗЮМЕ

Особенности конструктивных элементов педагогической техники
Арменуи Абаджян

Ключевые слова: культура, педагогическая культура, культура педагогической деятельности, коммуникация, рейтинг, рефлексия, принадлежность, техника.

Статья посвящена педагогической технике – важному элементу педагогического мастерства. В статье рассмотрены особенности структурных компонентов педагогической техники, в которых подчеркивается роль культуры педагогической деятельности, коммуникации, имиджа, педагогической рефлексии и эмпатии в современной системе образования.

SUMMARY

Peculiarities of Structural Components of Pedagogical Techniques
Armenuhi Abalyan

Keywords: culture, pedagogical culture, culture of pedagogical activity, communication, rating, reflection, belonging, technique.

The article focuses on the pedagogical techniques of key pedagogical skills, highlights the peculiarities of the structural components of pedagogical techniques, emphasizing the role of pedagogical activity, culture, communication, image, pedagogical reflection and empatization in the contemporary education system.